ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

(Ամփոփիչ Կլոր սեղան - քննարկումը Գուգարաց թեմի Առաջնորդարանում)

Եկեղեցի-պետություն-հասարակական կազմակերպություն համագործակցության շրջանակում մարտի 22-ին Առաջնորդարանում ներկայացվեց ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի ֆինանսավորմամբ և Գուգարաց թեմի աջակցությամբ իրականացվող «Այսօր կերտում ենք ապագան» ծրագրի կատարման ընթացքը:

Ծրագրի շրջանակներում, որպես Եկեղեցի-պետություն-հասարակական կազմակերպություն համագործակցության շոշափելի արդյունք, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի կողմից Վանաձոր համայնքի խիստ կարիքավոր 5 հաշմանդամների տրամադրվել են 4 էլեկտրական և 1 մեխանիկական սայլակ՝ 2,5 մլն դրամ ընդհանուր արժողությամբ, քաղաքապետ Ս. Դարբինյանի կողմից տրամադրվել է էլեկտրական սայլակի մեկ մարտկոց՝ 45000 դրամ արժողությամբ:

Թեմական առաջնորդի հովանավորությամբ այս տարի թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարում իրենց ամառային հանգիստը կանցկացնեն համագործակցող և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների անապահով և խիստ կարիքավոր ընտանիքների թվով 50 երեխաներ:

«Ժողովրդավարական նախաձեռնությունների երիտասարդական կենտրոն» ՀԿ-ի կողմից ճշտվել և թարմացվել են Վանաձորում գործող ՀԿ-ների ցանկը:

Ծրագրի շրջանակներում Ծաղկազարդի տոնին, որը Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ նաև մանուկների օրհնության օրն է, մասնակից ՀԿ-ների թվով 250 երեխաներ, ստանալով թեմական առաջնորդի օրհնությունը, կմասնակցեն Վանաձորի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու ներքնահարկ սրահում կազմակերպվող տոնական հանդիսությանը:

Կարևորելով Վանաձորի մշակութային կենտրոնների, հուշարձանների, հուշակոթողների և հարակից տարածքների մաքրությունը՝ քաղաքապետարանի սոցիալական ծրագրերի բաժնի առաջարկությամբ որոշվեց հանդես գալ յուրօրինակ նախաձեռնությամբ. ծառատունկերին զուգահեռ մաքրել և ներկայանալի տեսքի բերել թե՛ հուշակոթողները, թե՛ նրանց հարակից տարածքները:

«Այսօր կերտում ենք ապագան» ծրագրի շրջանակներում իրականացվող ամփոփիչ այս կլոր սեղան-քննարկումը մեկնարկը դարձավ Հայ Առաքելական Մայր Եկեղեցու, պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների համագործակցությանը, համայնքում գործող կազմակերպությունների շարունակական և համատեղ նոր ծրագրերի իրականացմանը՝ կարևորելով սեփական փորձի և կարողությունների օգտագործումը համայնքի զարգացման համար:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ